ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

51-ՐԴ ԳՎԱՐԴԻԱԿԱՆ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆ ԿՈՒՐՍԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կուրսկի ճակատամարտը երկրորդ համաշխարհային պատերազմում խոշորագույն ռազմական գործողություններից մեկն ու ֆաշիզմի ջախջախման շրջադարձային ելակետն է։ Այդ նշանավոր ճակատամարտին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև 51-րդ գվարդիական (նախկին 76-րդ հայկական) Լենինի շքանշանակիր, Կ. Օ. Վորոշիլովի անվան Վիտեբսկյան կարմրադրոշ հրաձգային դիվիզիան[1]։

Ստալինգրադի ճակատամարտի հաղթական ավարտից հետո դիվիզիայի զորամասերը երկաթուղով փոխադրվեցին Լիպեցկի մարզի Ելեց քաղաքը։ Այնուհետև, դիվիզիան 21-րդ բանակի մյուս միավորումների հետ միասին հետիոտն շարժվեց Ֆատեժ—Կուրսկ—Պրոխորովկա երթուղով։ Երթն ընթանում էր միայն գիշերը՝ լուսաքողարկման և սաստիկ սառնամանիքների պայմաններում։ Տրանսպորտի անբավարարությունը մարտիկներին ստիպում էր ուսերի վրա տանել զենքն ու հանդերձանքը, հաղթահարել մեծ դժվարություններ։ Չնայած դրան, զվարդիականները ցուցաբերեցին մեծ տոկունություն՝ հաղթահարելով ավելի քան 750 կմ ճանապարհ՝ օրական անցնելով միջին հաշվով 50—60 կմ։ Երբ նրանք գտնվում էին Օրոյան քաղաքից հարավ ընկած շրջանում, հայտնի դարձավ, որ հակառակորդը գրավել է Բելգորոդը։ Այդ շրջանում գործող սովետական 40-րդ և 69-րդ բանակներն ամրանալով Հյուսիսային Դոնեց գետի ձախ ափին, կասեցնում էին հակառակորդի հարձակումը։ Հենց այդ բանակների միջև ընկած տեղամասերում՝ Դմիտրիևկա, Տրիրեչնոյե, Բերյոզով, Շոպինո բնագծում, պաշտպանություն գրավեցին երթից հոգնած 21-րդ բանակի միավորումները[2]։

Գերմանաֆաշիստական զորքերի բազմաթիվ փորձերը՝ Բելգորոդի շրջանում ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը, հանդիպելով համառ դիմադրության, անհաջողության մատնվեցին և հակառակորդը ստիպված էր դադարեցնել հարձակումը։

51-րդ դիվիզիայի զորամասերը, որոնք պաշտպանական դիրքեր էին գրավել Կուրսկի մարզի Բելենիխինի շրջանի Յակովլևո, Տետերևինո և Լուչկի գյուղերի շրջանում, հնարավորություն ստացան այդ դադարն օգտագործել համալրման ու հանգստանալու նպատակով։ Դրա կարիքը շատ էր զգացվում,

---

1 *Մինչև Կուրսկի ճակատամարտն ընդգրկող ժամանակաշրջանում դիվիզիայի պատմությունը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 6 և 1972, № 2։*

2 «По приказу Родины (боевой путь 6-й гвардейской армии)», М., 1971, стр. 72.

քանի որ 1943 թ. փետրվարի 3-ի տվյալներով դիվիզիայի շարքերում մնացել էր ընդամենը 3345 մարդ։ Համալրվելուց հետո, հուլիսի 1-ի տվյալներով, դիվիզիայում արդեն կար 8395 մարդ[3]։ Խիստ մեծացավ նաև դիվիզիայի կրակային հզորությունը. հետևակի զգալի մասը զինվեց ավտոմատ հրացաններով ու գնդացիրներով, ֆուգասային հրանետներով և հակատանկային հրացաններով, հրետանին համալրվեց նոր տիպի ականանետներով, հրանոթներով ու հաուբիցներով, սակրավորների, կապավորների և հետախույզների տրամադրության տակ դրվեցին նորագույն սարքավորումներ ու տեխնիկա։ Կուրսկի ճակատամարտի նախօրյակին դիվիզիայի զորամասերն ապահովված էին անհրաժեշտ քանակությամբ զինամթերքով, վառելիքի, սննդի ու հանդերձանքի պաշարով։ Նախապատրաստական շրջանում տեղի ունեցած զորավարժությունների ընթացքում մշակվեցին հրետանու և տանկերի հետևակի համագործակցության լավագույն տարբերակներ։ Հրետանավորները հրաձգության պարապմունքների ժամանակ հմտանում էին փակ դիրքերից և ուղիղ նշանառությամբ կրակելու մեջ։ Անց էին կացվում սնայպերների, գնդացրորդների, տանկեր կործանողների, հետախույզների, կապավորների, սանիտարների, սակրավորների հավաքներ։

Մարտական ուսուցման հետ մեկտեղ դիվիզիայի զորամասերում տարվում էին բազմատեսակ կուսակցական-քաղաքական աշխատանքներ, որոնց հիմնական նպատակը մարտիկների բարոյակամային հատկանիշների ամրապնդումն էր։ Քաղաշխատողները, կուսակցական ու կոմերիտական կազմակերպիչները և ագիտատորները ստորաբաժանումներում անցկացնում էին բազմաթիվ զրույցներ և ունկնդիրներին պարզաբանում թշնամու ագրեսիվ նպատակները, որոնք ուղղված էին աշխարհում առաջին սոցիալիստական պետության դեմ։ Նրանք ռազմիկներին ծանոթացնում էին նաև ռազմաճակատի տեղամասերում ստեղծված վիճակի, միջազգային դրության հետ, պատմում ֆաշիստական զավթիչների դեմ մղվող պայքարում սովետական բանակի հերոսական սխրանքների, թիկունքի աշխատավորների տիտանական աշխատանքի մասին։ Դիվիզիայի հրամանատարությանն ու քաղաշխատողներին հսկայական օգնություն էր ցույց տալիս քաղբաժնի օրգան «Ворошиловец» թերթը։ Դիվիզիայի ռազմիկները սիրում էին իրենց թերթը և անհամբերությամբ սպասում նրա հերթական համարին։ Թերթի էջերից նրանք իմանում էին իրենց ընկերների հերոսական սխրանքների, դիվիզիայի տեղամասում և ամբողջ ռազմաճակատում տիրող դրության մասին։ «Ворошиловец»-ի էջերում նրանք հանդես էին գալիս թշնամու դեմ մղված մարտերում ձեռք բերած փորձի փոխանակությամբ։ Դիվիզիայի հրամանատարությանն ու քաղաշխատողներին մեծ օգնություն էր ցույց տալիս նաև 21-րդ բանակի քաղբաժնի օրգան «Боевой натиск» թերթը։

Գալիք մարտերին նախապատրաստվելու ընթացքում դիվիզիայի ինտերնացիոնալ անձնակազմը, որն իր շարքերում ուներ 32 ազգերի ներկայացուցիչներ, մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ նաև «Правда» թերթի 1943 թ. փետրվարի 27-ի համարում տպագրված «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին» առաջնորդող հոդվածին և հայ ռազմիկ-

---

[3] Центральный архив Министерства обороны СССР (այսուհետև՝ ЦАМО СССР), ф. 51 гв. сд, оп. 1, д. 2, л. 51.

ներին հայ ժողովրդի ուղղած նամակ-ուղերձին։ Չնայած այդ ժամանակ դիվիզիայում ծառայող հայ ռազմիկներն այլևս մեծամասնություն չէին կազմում, ինչպես պատերազմի սկզբում էր, հրամանատարությունը շարունակում էր ավանդական կապերը Սովետական Հայաստանի աշխատավորության հետ։ Ապրիլին Երևան մեկնեց դիվիզիայի 11 հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ գվարդիայի ավագ լեյտենանտ, «Ворошиловец»-ի աշխատակից Հրաչյա Քոչարի գլխավորությամբ։ Սովետական Հայաստանի աշխատավորության հետ գվարդիականների բոլոր հանդիպումները վեր էին ածվում ռազմաճակատի և թիկունքի սերտ համագործակցության վառ տոնախմբության։ Մայիսի սկզբներին պատվիրակությունը վերադարձավ ռազմաճակատ։ Նրա անդամները ելույթներ էին ունենում իրենց ստորաբաժանումներում և մարտիկներին պատմում թիկունքի անձնվեր աշխատանքի ու այն մասին, թե ինչպես ամրակուռ է թիկունքը, որը հերոսաբար օգնում է սովետական բանակին՝ հիտլերյան զավթիչների դեմ մղվող ծանր պայքարում։ Այդ ամենն ավելի էր ոգևորում դիվիզիայի մարտիկներին և նրանց օգնում հաջողությամբ պաարաստվելու գալիք վճռական մարտերին։

Այդ ընթացքում տեղի ունեցան ևս երկու իրադարձություններ, որոնք նույնպես մեծապես նպաստեցին գվարդիականների բարոյական ոգու բարձրացմանը։ Դրանցից առաջինը Ստալինգրադի ճակատամարտում գերմանա-ֆաշիստական զորքերի շրջապատմանն ու ոչնչացմանն ակտիվորեն մասնակցելու և այդ ընթացքում ցուցաբերած մեծ խիզախության համար 21-րդ բանակին գվարդիական կոչում շնորհելն էր[5], իսկ երկրորդը՝ դիվիզիան Լենինի շքանշանով պարգևատրելը[6]։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության բարձր պարգևներն է՛լ ավելի ոգևորեցին ու պարտավորեցրին գվարդիականներին։ Դիվիզիայի հրամանատար, գվարդիայի գեներալ-մայոր Ն. Թավարթքելաձեն, ելույթ ունենալով բարձր պարգևը ստանալու առթիվ հունիսի 22-ին տեղի ունեցած համադիվիզիական միտինգում, ասաց. «Մենք լավ ենք կռվել անցյալում, բայց այժմ պետք է ավելի լավ կռվենք։ Դիվիզիայի ողջ անձնակազմը պետք է պատրաստ լինի թշնամուն այնպիսի հարված հասցնելու, որը մի քանի անգամ գերազանցի Ստալինգրադի տակ հասցրածին։ Դրա համար պահանջում եմ համառորեն սովորել և մինչև կատարելագործության աստիճան տիրապետել տրված զենքին...։ Հայրենիքի բարձր վստահությունը կարդարացնենք առաջիկա մարտերում»[7]։

Գվարդիականները պատվով կատարեցին հրամանատարի պահանջը և նախապատրաստական աշխատանքներն ավարտեցին ժամանակին։ Երբ 1943 թ. հուլիսի 5-ի վաղ առավոտյան Օրյոլ—Կուրսկ—Բելգորոդի շրջանում

---

4 Դա դիվիզիայի թվով 3-րդ պատվիրակությունն էր, որ պատերազմի ընթացքում այցելում էր Սովետական Հայաստան։ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 2, էջ 79—106։

5 Դիվիզիան 21-րդ բանակի կազմում էր գտնվում 1942 թ. փետրվարից։ 1943 թ. ապրիլի 22-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով, 21-րդ բանակը վերակազմավորվեց 6-րդ գվարդիական բանակի։

6 Դիվիզիան Լենինի շքանշանով պարգևատրվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թ. հունիսի 19-ի հրամանագրով։

7 ЦАМО СССР, ф. 51 гв. сд, оп. 1, д. 47, л. 152.

սկսվեց ֆաշիստական զորքերի հզոր հարձակումը. դիվիզիայի զորամասերը կազմ ու պատրաստ դիմավորեցին թշնամուն։

Հարձակման առաջին իսկ օրը հակառակորդը դիվիզիայի պաշտպանած տեղամասի ուղղությամբ շարժեց 2 տանկային և 2 հրետանային դիվիզիաներ, որոնց օդից օգնում էր ավիացիան։ Հակառակորդը գլխավոր հարվածն ուղղեց 52-րդ գվարդիական դիվիզիայի 151-րդ և 155-րդ գվարդիական հրաձգային գնդերի գրաված տեղամասի դեմ, որտեղ պաշտպանվում էր 51-րդ գվարդիական դիվիզիայի 156-րդ գվարդիական հրաձգային գնդի 3-րդ գումարտակը, և 375-րդ հրաձգային դիվիզիայի աջ թևի դեմ, որտեղ պաշտպանվում էր 51-րդ գվարդիական դիվիզիայի 154-րդ գվարդիական Լոռիյսկի գնդի 3-րդ գումարտակը։ Չնայած մեր զորամասերի համառ դիմադրությանը, հակառակորդին հաջողվեց ճեղքել բանակի պաշտպանության առաջին բնագիծը և զարգացնել հաջողությունը հյուսիսային ուղղությամբ։ Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, 6-րդ գվարդիական բանակի հրամանատար, գվարդիայի գեներալ-լեյտենանտ Ի. Չիստյակովը հրամայեց 52-րդ գվարդիական դիվիզիայի պաշտպանության գոտի դուրս բերել 51-րդ գվարդիական դիվիզիայի հիմնական ուժերը՝ Յակովլևոյի ուղղությամբ հակառակորդի տանկերի առաջխաղացումը կասեցնելու նպատակով[8]։ Դիշերվա ընթացքում հակառակորդը Կրապովինսկիե դվորի և Սմորոդինոյի շրջանում կենտրոնացրեց իր գլխավոր ուժերը՝ 3 տանկային և 2 հետևակային դիվիզիաներ և հուլիսի 6-ի առավոտյան, 150—170 ինքնաթիռների աջակցությամբ, սկսեց հարձակումը։ Գլխավոր հարվածը հասցվում էր 243,2 բարձունքի ուղղությամբ, որտեղ պաշտպանվում էր 51-րդ գվարդիական դիվիզիայի 2-րդ հրաձգային գումարտակը[9]։ Չնայած հակառակորդի կենդանի ուժի և տեխնիկայի բացահայտ գերակշռությանը, օրվա առաջին կեսին նրա բոլոր գրոհները ետ մղվեցին։ Թշնամու տանկերը մի քանի անգամ փորձեցին Յակովլևոյից հարավ ճեղքել դիվիզիայի պաշտպանությունը, սակայն հանդիպելով հրետանային հզոր հակահարվածի՝ նահանջեցին։ Այնուհետև հիտլերականները այդտեղ առաջակալ զորամաս թողնելով, տանկերը նետեցին Լուչկիի ուղղությամբ։ Մանր մարտերից հետո հակառակորդին հաջողվեց նեղ ճակատով ճեղքել 51-րդ գվարդիական դիվիզիայի պաշտպանությունը։ Սակայն դիվիզիային օգնության հասած 5-րդ գվարդիական տանկային կորպուսի զորամասերը փակեցին հակառակորդի ճանապարհը։ Մավալվեցին ծանր ու համառ մարտեր։ Օրվա վերջում թշնամուն հաջողվեց, մարտի մեջ թարմ ուժեր մտցնելով, գրավել Լուչկին և շարունակել հարձակումը հյուսիս-արևելյան ուղղությամբ։ Դիվիզիայի զորամասերը հակառակորդի օդային ռմբակոծումներից ու հրետանային կրակից մեծ կորուստներ կրելով, ինչպես նաև թիկունքում ֆաշիստական տանկեր հայտնվելու հետևանքով ստիպված էին ետ քաշվել Պոկրովկայի շրջանում նախօրոք կառուցված բնագիծը[10]։

Դիվիզիայի 158-րդ գվարդիական հրաձգային գունդը և 156-րդ գվարդիական գնդի 1-ին գումարտակն այդ ժամանակընթացքում շարունակում էին պաշտպանել նախկին դիրքերը Տոմարովկայի շրջանում, ետ մղելով հա-

---

8 «По приказу Родины (боевой путь 6-ой гвардейской армии)», стр. 95.

9 ЦАМО СССР, ф. 51 гв. сд, оп. 1, д. 37, л. 154—155.

10 Նույն տեղում, գ. 88, թ. 10։

կառակորդի հետևակի 60—70 տանկերի աջակցությամբ իրականացվող անընդմեջ գրոհները։ Ետ մղելով հակառակորդի 5 համառ գրոհները, գունդը շարունակում էր մնալ իր դիրքերում։

Գերմանացիները մարտի մեջ մտցրեցին թարմ ուժեր, փոխեցին հարձակման գլխավոր ուղղությունը և շրջանցեցին 154-րդ գվարդիական գնդի ձախ թևը։ Գունդը հայտնվելով կիսաշրջապատման մեջ, հուլիսի 7-ի առավոտյան ետ քաշվեց նոր բնագիծ, որտեղ համառ մարտեր մղեց հակառակորդի մեկ գնդից բաղկացած խմբավորման դեմ։ Հուլիսի 8-ի առավոտյան գունդը պաշտպանական դիրքեր գրավեց Սուխո-Սոլոտինոյի հյուսիս-արևմտյան ծայրամասում և երկու օր անընդհատ պաշտպանեց այն։ Դաժան մարտեր բորբոքվեցին Բելգորոդ—Օբոյան խճուղու երկայնքով։ Այդ խճուղին Կուրսկ տանող ամենակարճ ճանապարհն էր։ Գվարդիականները օգնության հասած 1-ին տանկային բանակի զորամասերի հետ միասին հերոսաբար կասեցնում էին թշնամու համառ գրոհները։ Անհաջողությամբ պսակվեցին նաև Կոշևտովկան գրավելու հիտլերականների փորձերը։ Տանկային և կործանիչ-հակատանկային հրետանային բրիգադների հետ միասին Կոշետովկան պաշտպանում էին 51-րդ գվարդիական դիվիզիայի զորամասերը։ Հուլիսի 9-ին դիվիզիայի ձախ թևում մարտերը նոր թափով ծավալվեցին։ Չնայած այն բանին, որ օրվա երկրորդ կեսին հակառակորդին հաջողվեց գրավել Կոշետովկան, դիվիզիայի զորամասերը կարողացան օրվա վերջում ամբողջովին կանգնեցնել թշնամու հարձակումը, դրանով իսկ ի չիք դարձնելով Օբոյանի շրջան դուրս գալու նրա վերջին փորձերը։ Հաջորդ օրը հակառակորդը հրետանային և օդային ուժեղ նախապատրաստությունից հետո 4 տանկային դիվիզիա նետեց Բելգորոդ—Կուրսկ խճուղու ուղղությամբ, հույս ունենալով հուժկու իոյահարումով ճեղքել գվարդիականների պաշտպանությունը։ Սակայն թշնամու այս մտահղացումը նույնպես չիրականացավ։ Նրա «Վագր» և «Հովազ» տիպի տանկերն ու «Ֆերդինանտ» ինքնագնաց հրետանային սարքավորումները, հանդիպելով սովետական գվարդիական ականանետների և ծանր հրետանու կենտրոնացված կրակին, ինչպես նաև հետևակային զորամասերի կործանիչ հակահարվածին, մեծ կորուստներով ետ քաշվեցին։ Այդ օրը հակառակորդի առաջխաղացումը լրիվ կասեցվեց։

Հուլիսի 11-ին հակառակորդը 60 տանկերի և հետևակային 2 գնդերի ուժերով վերջին անգամ փորձեց 154-րդ գվարդիական գնդի տեղամասում ճեղքել դիվիզիայի պաշտպանությունը։ Սակայն նրա այդ ճիգերը նույնպես մատնվեցին անհաջողության։ Հուլիսի 12-ը Կուրսկի ճակատամարտի բեկման օրն էր։ Այդ օրը թշնամու օրյոլյան խմբավորման դեմ հարձակման անցան Բրյանսկի և Արևմտյան ռազմաճակատների զորքերը։ Երեք օր հետո հարձակման անցան նաև Կենտրոնական ռազմաճակատի զորքերը։ Ուժեղ հարվածներով նրանք մի քանի տեղամասերում ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և սկսեցին ծավալել հարձակումը։ Հուլիսի 12-ին հարձակման անցան նաև Վորոնեժի ռազմաճակատի զորքերը։ Պրոխորովկայի շրջանում տեղի ունեցավ տանկային ճակատամարտ, որին մասնակցեցին շուրջ 1200 տանկ ու ինքնագնաց հրետանային սարքավորում, հրետանու և ավիացիայի խոշոր ուժեր։ Հակառակորդին այնպիսի կործանիչ հարված հասցվեց, որ նա սկսեց իր զորքերի ետքաշումը դեպի հուլիսի 5-ի ելման դիրքերը։ Այսպիսով,

հիտլերյան հրամանատարությունը հարկադրված էր վերջնականապես հրաժարվել հարձակողական գործողություններից և անցնել պաշտպանության։

Բելգորոդից հյուսիս-արևմուտք ընկած շրջանում պաշտպանողական մարտերի ընթացքում 51-րդ գվարդիական դիվիզիայի զորամասերը հակառակորդին հասցրեցին կենդանի ուժի և տեխնիկայի մեծ վնասներ։ Սակայն արյունահեղ մարտերում ծանր կորուստներ կրեցին նաև դիվիզիայի զորամասերը։ Այդ պատճառով էլ նրանք հուլիսի 13-ից աստիճանաբար դուրս բերվեցին առաջին գծից և 23-րդ գվարդիական հրաձգային կորպուսի պաշտպանության երկրորդ բնագծում սկսեցին համալրվել ու հանգստանալ՝ նախապատրաստվելով հարձակողական մարտերի։ Հուլիսի 18-ին դիվիզիայի հիմնական ուժերին միացավ նաև 158-րդ գվարդիական հրաձգային գունդը, որը հուլիսի 12-ի հարձակմանը մասնակցել էր 69-րդ բանակի կազմում։

Կուրսկի ճակատամարտի առաջին շրջանում, պաշտպանողական մարտերի ժամանակ, հակառակորդի ընտիր զորամասերի հզոր հարձակումը կասեցնելու, նրանց արյունաքամ անելու, ինչպես նաև ցուցաբերած արիության համար Գերագույն գլխավոր հրամանատարի 1943 թ. հուլիսի 24-ի հրամանով դիվիզիայի ողջ անձնակազմին շնորհակալություն հայտնվեց[11]։

Հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբներին դիվիզիայի զորամասերը պատրաստ էին հարձակման։ Գնդերի, գումարտակների, դիվիզիոնների, վաշտերի, մարտկոցների, դասակների և ջոկերի հրամանատարները մարտիկներին հստակորեն բացատրում էին մարտական խնդիրը, գնահատում իրադրությունը։ Հարձակման և գրոհի անցնելու հրամանը հրամանատարական բոլոր օղակներին տրվեց տեղում։

Օգոստոսի 2-ի առավոտյան դեմ դիվիզիայի զորամասերը, օգնական ուժերի հետ միասին, փոխարինեցին 309-րդ հրաձգային դիվիզիայի 955-րդ գնդին և ելման դիրքեր գրավեցին 2 կմ ճակատով[12]։ Օգոստոսի 3-ի առավոտյան, երեք ժամ տևած հրետանային նախապատրաստությունից հետո, Վորոնեժի ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի առաջին բնագծում, Բելգորոդ-Խարկովյան ընդհանուր ուղղությամբ, դիվիզիայի զորամասերը հարձակման անցան։ Օդից նրանց անգնահատելի աջակցություն էր ցույց տալիս ավիացիան։ Ծիրիբինոյե-Կազացկոյե-Դրագունսկոյե շրջանում հաջողությամբ ճեղքելով հակառակորդի պաշտպանությունը և կոտրելով այդ տեղամասում գործող էսէսական ընտիր զորամասերի դիմադրությունը, դիվիզիան առաջ շարժվեց դեպի արևմուտք։ Շարունակելով զարգացնել հարձակումը նախկին ուղղությամբ, նրա զորամասերը մինչև օգոստոսի 5-ը ազատագրեցին Կազացկոյե, Ստարայա Գլինկա, Նովայա Գլինկա, Մոշչենոյե բնակավայրերը և իրենց գործողություններով օգնեցին 52-րդ գվարդիական հրաձգային դիվիզիային գրավելու Տոմարովկան։ 6-րդ գվարդիական բանակի հաջող գործողությունները դրական ազդեցություն ունեցան հակառակորդի բելգորոդյան խմբավորման դեմ Տափաստանային ռազմաճակատի զորքերի հարձակումը զարգացնելու համար։ Օգոստոսի 5-ին ծանր ու համառ մարտերից հետո 7-րդ գվարդիական և 69-րդ բանակների, ինչպես նաև 1-ին մեքենայացված կորպուսի զորքերը ազատագրեցին Բելգորոդը։ Նույն օրը սովետական զորքերի

---

11 Նույն տեղում, գ. 2, թ. 34։
12 Նույն տեղում, գ. 37, թ. 171։

Օրյոլյան խմբավորումն ապատագրեց Օրյոլը։ Ի նշանավորումն այդ հաղթանակի մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան նույն օրը երեկոյան 120 հրանոթների 12 համազարկերով ողջունեց Արևմտյան, Բրյանսկի, Կենտրոնական, Տափաստանային և Վորոնեժի ռազմաճակատների զորքերին։ Դրանք Հայրենական մեծ պատերազմն սկսվելուց ի վեր առաջին հաղթական համազարկերն էին, որոնք այնուհետև դարձան ավանդույթ։

Հաջորդ օրը, շարունակելով հակառակորդի նահանջող զորքերի հետապնդումը և ոչնչացնելով նրա վերջապահ ստորաբաժանումները, 51-րդ գվարդիական դիվիզիան առաջ շարժվեց Բորիսովկայի ուղղությամբ։ Օգոստոսի 7-ին ջախջախվեց հակառակորդի Բորիսովկայի խմբավորումը, որը կազմում էր Վորոնեժի ռազմաճակատի զորքերի մի մասը։ Դրանով իսկ այդ զորքերը հնարավորություն ստացան շարունակելու հարձակումը խարկովյան ուղղությամբ։ Դիվիզիայի գորամասերը, հետապնդելով հակառակորդի ջախջախված զորքերի մնացորդներին, դուրս եկան Բորիսովկա—Կրյուկովո ճանապարհը։ Կատարելով երթ՝ Բորիսովկա—Ուդ, գվարդիականները օգոստոսի 8-ի դիշերը լույս 9-ի առավոտյան մտան Զոլոչև քաղաքը և այն մաքրեցին թշնամուց։ Միաժամանակ նրանք ազատագրեցին Զապադինկա, Օրեշանկա, Սսլովկա, Մակարիխա բնակավայրերը, որտեղ գրավեցին հակառակորդի պարենի, դինամիտների և վառելանյութի մի քանի խոշոր պահեստներ։ Օգոստոսի 11-ին դիվիզիայի զորամասերն ազատագրեցին Խարկովից հյուսիս-արևմուտք գտնվող Բոգոդուխովո և Կրասնոկուտսկ քաղաքները[13]։

6-րդ գվարդիական բանակի գորամիավորների հաջող հարձակումը և խարկովյան ուղղությամբ նրանց սեպաձև խորացումը գերմանաֆաշիստական հրամանատարությանը հարկադրեց Բոգոդուխովոյից հարավ ընկած շրջանում կենտրոնացնել «Ռայխ», «Մեռած գլուխ», «Վիկինգ» էսէսական ընտիր տանկային դիվիզիաները և հարվածել 6-րդ գվարդիական բանակի ձախ թևին[14]։ Համարյա միաժամանակ հարձակման անցան մեր 6-րդ գվարդիական բանակի աջ թևում գործող թշնամու զորքերը։ Մեկ շաբաթ շարունակ տեղի ունեցան կատաղի մարտեր։ Հակառակորդին չհաջողվեց հասնել իր նպատակին՝ ճեղքել սովետական զորքերի պաշտպանությունը և դուրս գալ Վորոնեժի ռազմաճակատի հարվածային խմբավորման թիկունքը։ Օգոստոսի 17-ին նա այդ տեղամասում դադարեցրեց ակտիվ գործողությունները և անցավ պաշտպանության։ Հաջորդ օրը թշնամին հարձակում սկսեց մեկ այլ տեղամասում՝ Ախտիրկա—Կոլոնտաև—Լյուբովկա շրջանում։ Կատաղի մարտերում մեր զորքերին հաջողվեց ջախջախել հակառակորդին և առաջ շարժվել Պոլտավայի ուղղությամբ[15]։ Դիվիզիայի զորամասերը շարժվում էին Կոնստանտինովկա—Կոլոմակ ուղղությամբ։ Խարկով—Պոլտավա երկաթուղու երկայնքով հետապնդելով թշնամուն՝ նրանք օգոստոսի վերջերին դուրս եկան Պոլտավայի մարգի Զուտովոյի շրջանը, այսինքն այնտեղ, որտեղ 1941 թ. սեպտեմբերի 27-ին դիվիզիայի զորամասերն առաջին անգամ մարտի էին բռնվել գերմանաֆաշիստական զորքերի հետ։ Այժմ դերերը լրիվ փոխվել էին՝

---

13 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 2, գ. 1, թ. 6—11։

14 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», т. 3, М., 1964, стр. 288.

15 «По приказу Родины (боевой путь 6-й гвардейской армии)», стр. 133—134.

գվարդիականները կործանիչ հարվածներով թշնամուն դուրս էին քշում մեր հայրենիքից։ Օգոստոսի 23-ին Տափաստանային ռազմաճակատի զորքերը, Վորոնեժի և Հարավ-արևմտյան ռազմաճակատների հետ համագործակցելով, ազատագրեցին Խարկովը, որով ավարտվեց Կուրսկի աղեղում ծավալված վիթխարի ճակատամարտը։

Չնայած 51-րդ գվարդիական դիվիզիայի զորամասերն անմիջականորեն չմասնակցեցին Խարկովի ազատագրմանը, բայց և այնպես Բոգոդուխովո—Կրասնոկուտսկ շրջանում մղած հաջող մարտերով նպաստեցին այդ մեծ հաղթանակին։

Հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը ընկած ժամանակաընթացքում տեղի ունեցած մարտերում դիվիզիայի գործողությունների արդյունքները հանրագումարի բերելով՝ տեսնում ենք, որ գվարդիականները ճակատամարտի հենց առաջին օրն իրենց վրա ընդունելով գերմանաֆաշիստական զրահատանկային և մոտոհետևակային ընտիր զորամասերի հուժկու հարվածները, կարողացան ոչ միայն կասեցնել դրանք, այլև թշնամուն դաժան մարտերում ուժասպառ անել՝ նրան պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի զգալի կորուստներ։ Այսպես, օրինակ, հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը գվարդիականները ոչնչացրել են հակառակորդի ավելի քան 6000 զինվոր ու սպա, 230 տանկ և ինքնագնաց հրետանային սարքավորում, 10 ինքնաթիռ, 140 հրանոթ և ականանետ, 150 գնդացիր, 14 զրահամեքենա, 48 բեռնատար ավտոմեքենա, ավար վերցրել 13 տանկ, 89 հրանոթ և ականանետ, 221 գնդացիր, 164 ավտոմեքենա, 8 տրակտոր, տասնյակ մոտոցիկլետներ, շուրջ 1000 հրացան և ավտոմատ, զինամթերքի, վառելանյութի, պարենի ու հանդերձանքի 5 պահեստ և այլն։ Հուլիսյան պաշտպանողական և օգոստոսյան հարձակողական մարտերի ընթացքում ցուցաբերած սխրանքների համար շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին դիվիզիայի ավելի քան 1300 զինվոր ու սպա[16]։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թ. սեպտեմբերի 21-ի հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչում շնորհվեց 122-րդ գվարդիական հրետանային գնդի հրամանատար, գվարդիայի մայոր Մ. Ն. Ուղլովսկուն, հրանոթի հրամանատար, գվարդիայի ավագ Ա. Ա. Վլասովին (երկուսին էլ հետմահու) և հրանոթի նշանառու, գվարդիայի կրտսեր սերժանտ Ա. Պ. Ստարցևին[17]։ 158-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Մ. Կ. Բելովը, գումարտակի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Մ. Վ. Լուտոխինը, դիվիզիոնների հրամանատարներ, գվարդիայի կապիտաններ Դ. Ն. Գալատը, Վ. Ե. Սինիլովը, գումարտակների հրամանատարների քաղաքով տեղակալներ, գվարդիայի ավագ լեյտենանտներ Ի. Ի. Ռուսանովսկին, Գ. Ի. Սելիվանովը, հրաձիգներ Ռ. Կ. Կոկինաշվիլին, Կ. Մ. Յունուսովը, Ֆ. Ֆ. Կարնաուխովը և շատ ուրիշներ արժանացան մարտական Կարմիր գրոշի շքանշանի[18]։ Ալեքսանդր Նևսկու շքանշանի արժա-

---

16 ЦАМО СССР, ф. 51 гв. сд, оп. 2, д. 102, л. 63—92; ф. 6 гв. оп. 5136, д. 55, л. 57.

17 Նույն տեղում, ֆ. 793756, գ. 9, թ. 71—72, 128, գ. 49, թ. 7 («По приказу Родины (боевой путь 6-ой гвардейской армии)» աշխատության վերջում՝ 6-րդ գվարդիական բանակի տված Սովետական Միության հերոսների ցուցակում Ա. Ա. Վլասովի անունը բաց է թողնված)։

18 ЦАМО СССР, ф. 33, оп. 686044, д. 103, л. 136; д. 771, л. 332, 336, д. 104, л. 61; д. 202, л. 113; д. 1238, л. 33.

նացան գումարտակի հրամանատար կապիտան Վ. Ն. Գավրիլովը, նրա տեղակալ՝ գվարդիայի կապիտան Ի. Ն. Բերեզնոյը, հրաձգային վաշտի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Վ. Կ. Գուգլինը և ուրիշներ[19]։ Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվեց 156-րդ գվարդիական գնդի հրամանատար, գվարդիայի մայոր Պ. Վ. Կրուտովը[20]։ Հետմահու նման շքանշանի արժանացան գումարտակների հրամանատարներ, գվարդիայի կապիտաններ Ի. Ա. Զայչենկոն, Մ. Ի. Միխայլովը և Ա. Վ. Դորելովը[21]։

Պարգևատրվածների մեջ կային ավելի քան 100 հայ զինվորներ ու սպաներ։ Կարմիր գրոշի շքանշանի արժանացածների թվում էին 156-րդ գվարդիական հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, գվարդիայի կապիտան Վ. Ս. Դավյաշյանը, որն աչքի ընկավ հատկապես հուլիսի 5—7-ի մարտերում[22], 122-րդ գվարդիական հրետանային գնդի 3-րդ դիվիզիոնի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Հ. Ս. Պիչիմյանը, որի հրետանավորները ոչնչացրեցին ֆաշիստական տասնյակ տանկեր, զրահապատներ, բազմաթիվ կրակակետեր և այլն[23]։ Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվածների թվում էր գվարդիայի կրտսեր սերժանտ Գ. Ա. Թաթուլյանը, որի զենիթային գնդացրի դիպուկ հերթազարկով հուլիսի 8-ին ցած էր գցվել ֆաշիստական «Մեսսերշմիդտ—109Ֆ» տիպի մեկ ինքնաթիռ[24]։ Ճակատամարտի ահեղ օրերին դիվիզիայի ռազմիկներին անգնահատելի օգնություն էր ցույց տալիս 62-րդ գվարդիական առանձին բժշկասանիտարական գումարտակի անձնակազմը, որի վիրաբուժական դասակի հրամանատար, հմուտ վիրաբույժ Ս. Ս. Սմբատյանը մարտական պայմաններում հաջողությամբ կատարեց 130 բարդ վիրահատություն։ Նրա ծառայությունները գնահատվեցին Կարմիր աստղի շքանշանով[25]։ Ճակատամարտի առաջին օրերին քաջաբար զոհվեց դիվիզիայի վետերաններից մեկը՝ սակրային վաշտի հրամանատար, գվարդիայի կապիտան Գ. Ս. Նաղարեթյանը։ Նրա ընկերները երդվեցին ոչնչացնել թշնամուն և տասնապատիկ լուծել սիրելի ընկերոջ վրեժը։ Թշնամու տասնյակ տանկեր ու հարյուրավոր զինվորներ հօդս ցնդեցին սակրավորներ Գ. Թ. Բաղդասարյանի, Ա. Մ. Ալեքսանյանի, Գ. Ա. Ավետիսյանի վարպետորեն քողարկած ականներից[26]։

Ճակատամարտի օրերին հերոսաբար գործեց նաև 55-րդ գվարդիական առանձին ավտովաշտի անձնակազմը։ Վարորդները գիշեր-ցերեկ, առանց քուն ու դադարի, հակառակորդի տեղատարափ կրակի տակ, ճանապարհապուրկ վայրերով միշտ ժամանակին առաջավոր գիծ էին հասցնում արկեր, փամփուշտներ, պարեն, հանդերձանք և այլն։ Հակառակ ուղղությամբ նրանք թիկունք էին տեղափոխում վիրավորներին։ Ավտովաշտի գործողությունները գերազանց գնահատելու համար նրա հրամանատար, գվարդիայի ավագ լեյ-

---

19 Նույն տեղում, գ. 1238, թ. 39, գ. 103, թ. 150։
20 Նույն տեղում, գ. 104, թ. 61։
21 Նույն տեղում, գ. 490, թ. 163, գ. 103, թ. 131—133։
22 Նույն տեղում, գ. 202, թ. 113։
23 Նույն տեղում, 51 գվ. դիվ. ֆ., ց. 2, թ. 168, թ. 55։
24 Նույն տեղում, ֆ. 33, ց. 682526, գ. 1659, թ. 226։
25 Նույն տեղում, 51 գվ. դիվ. ֆ., ց. 2, գ. 123, թ. 147։
26 Նույն տեղում, գ. 88, թ. 48։

տենանտ Պ. Ե. Պետրոսյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[27]։ Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց նաև հմուտ վարորդ Ջ. Ա. Գուլամբարյանը։ Նրա մարտական ընկերներ Ա. Ս. Գյունաշյանը, Ս. Լ. Սարդարյանը, Ս. Գ. Աբրահամյանը, Ե. Բ. Հարությունյանը, Ի. Մ. Եսայանը և ուրիշներ պարգևատրվեցին մեդալներով[28]։

Գվարդիականների շրջանում բարի համբավ ունեին նաև դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժնի պետ, գվարդիայի մայոր Ս. Ն. Մովսիսյանը, տեխսպասարկման դասակի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Ա. Հ. Չիթախյանը, հրաձգային ջոկի հրամանատար, գվարդիայի սերժանտ Խ. Հ. Ավագյանը, հրաձգային վաշտի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Կ. Բ. Հարությունյանը, սանիտարական վաշտի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Լ. Ս. Մկրտչյանը, ականանետային դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Մ. Հ. Համբարձումյանը և շատ-շատերը, որոնք թշնամու դեմ մղված դաժան մարտերում ապացուցեցին սոցիալիստական հայրենիքի նկատմամբ իրենց անսահման սերը՝ արժանանալով բազմապիսի պարգևների։

Բազմազգ 51-րդ դիվիզիայի բոլոր մարտիկները՝ ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, հայեր և մեր բազմազգ հայրենիքի մյուս ժողովուրդների ներկայացուցիչները Կուրսկի ճակատամարտի ժամանակ ուս-ուսի տված աներեր կռվեցին և իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիզմի դեմ մեր հայրենիքի հաղթանակի գործում։

Պատմական այդ ճակատամարտի ահեղ օրերին գվարդիականները հայրենիքի նկատմամբ իրենց հավատարմությունն ու անձնուրաց սերն արտահայտեցին ոչ միայն մարտի դաշտում ցուցաբերած անօրինակ սխրանքներով ու մինչև վերջ մարտնչելու ձգտումով, այլև մասսայաբար կոմունիստական կուսակցության շարքերն անցնելով։ Միայն հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 10-ը դիվիզիայի զորամասերում կուսակցության շարքերն անցնելու 475 դիմում տրվեց։ Շատերը դիմումները գրում էին մարտից առաջ՝ խրամատներում, կամ կարճատև դադարների ժամանակ։ 35 օրվա ընթացքում կուսակցության շարքերն ընդունվեցին մարտերում առավել աչքի ընկած 427 զինվոր և սպա[29]։ Դա վկայում է, որ ճակատամարտի դաժան օրերին դիվիզիայի անձնակազմի բարոյաքաղաքական վիճակը միշտ էլ կայուն է եղել, իսկ տրամադրությունը՝ մարտական։ Այսպիսով, 51-րդ գվարդիական Լենինի շքանշանակիր, Կ. Ե. Վորոշիլովի անվան Վիտեբսկյան կարմրադրոշ հրաձգային դիվիզիայի զորամասերը Վորոնեժի ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի մյուս փառապանծ միավորումների հետ միասին փառքով պսակեցին Ստալինգրադի ճակատամարտում ձեռք բերած գվարդիական դրոշները և իրենց արժանի ավանդը ներդրեցին Կուրսկի ճակատամարտում սովետական բանակի տարած պատմական հաղթանակի գործում։

---

27 Նույն տեղում, գ. 124, թ. 150, 163, 173։

28 Նույն տեղում, գ. 102, թ. 70—76։

29 Նույն տեղում, 6-րդ գվ. բտն. ֆ., ց. 5136, ղ. 55, թ. 51։

51-я ГВАРДЕЙСКАЯ СТРЕЛКОВАЯ ДИВИЗИЯ В КУРСКОЙ БИТВЕ

КЛИМЕНТ АРУТЮНЯН

Резюме

В знаменитой Курской битве активное участие приняла 51-я гвардейская (бывшая 76-я армянская) ордена Ленина Краснознаменная Витебская стрелковая дивизия им. К. Е. Ворошилова. В составе 23-го гвардейского стрелкового корпуса 6-ой гвардейской армии Воронежского фронта части дивизии мужественно приняли на себя первые удары отборных танковых и мотопехотных соединений немецко-фашистских захватчиков и вместе с другими частями Советской Армии мощными наступательными действиями вышвырнули их из южной части Курской дуги.

За проявленный героизм и мужество орденами и медалями были награждены более 1300 гвардейцев, а 3 гвардейцам было присвоено звание Героя Советского Союза.

В составе дивизии вместе с русскими, украинцами, белорусами, грузинами, азербайджанцами и другими представителями нашей многонациональной Родины сражались также и сыны армянского народа.